# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Ապրիլի 3-ին, կիրակի. - Ը օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):*
Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ այս է յաղթութիւն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր» (Ա Հովհ. Ե 4) բնաբանով քարոզ խոսեց:

*Ապրիլի 7-ին, հինգշաբթի. - ԺԲ. օր Յինանց: Անդրանիկ Սուրբ Աստուածածնի:*
Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Զիրինկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Ապրիլի 10-ին, կիրակի. - Գ. կիրակի: Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):*
Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Ապրիլի 17-ին, կիրակի. - Դ. կիրակի: Կարմիր Կիրակէ:*
Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մամբրե աբեղա Տաշչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն Իմ լսէ, եւ հաւատայ այնմ որ առաքեացն Զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս, եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս» (Հովհ. Ե 24) բնաբանով քարոզ խոսեց:

*Ապրիլի 24-ին, կիրակի. - Տօն Երեւման Ս. Խաչի:*
Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառէն եպիսկոպոս Ավետիքյանը: Հրեթացս Պատարագի պատարագիչ Սրբազան Հայրը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին (տե՛ս էջ 3):